

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՊՀ -ՈՒՄ**

(1990-2010 ԹԹ.)

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2010

ՀՏԴ 01
ՊՄԴ 91
Հ 246

Կազմեց՝ Պ. Գ. Ստեփանյանը
Խմբագիր՝ Լ. Յ. Հովհաննիսյան

Հ 246 Հայագիտական հրատարակությունները ԵՊՀ-ում (1990-2010 թթ.). Մատենագիտություն / Կազմեց Պ. Գ. Ստեփանյանը, խմբ.՝ Լ. Յ. Հովհաննիսյան. -Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 64 էջ:

ՀՏԴ 01
ՊՄԴ 91

ISBN-978-5-8084-1273-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.
© Կազմողի համար, 2010 թ.

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Գրահրատարակչական գործունեությունը Երևանի պետական համալսարանում սկսվել է համալսարանի հիմնադրման առաջին տարիներից: Դեռևս 1920 թ. ամռանը քննարկելով Պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեությունը՝ զարմանալի սենիմարի (1-ը փետրվար – 12-ը հունիս) ընթացքում՝ արձանագրվել է. «Ֆակուլտետը որոշել է՝ ուսանողներին դյուրություն ընծայելու համար տպագրել դասախոսություններ և այլ անհրաժեշտ ձեռնարկներ, սակայն աննպաստ պայմանների պատճառով հնարավորություն ունեցավ տպագրել միայն Ս. Տիգրանյանի թարգմանած Ջեյմսի հոգեբանությունից՝ 7 մամուլ և նրա դասախոսություններից՝ 3 մամուլ»:

Ամերիկացի հռչակավոր փիլիսոփա, հոգեբան Ուիլյան Ջեյմսի (1842 -1910) աշխատությունը թարգմանել էր համալսարանի հիմնադիր դասախոսներից Սիրական Տիգրանյանը: Սա առաջին գիրքն է, որ լույս է ընծայել Երևանի պետական համալսարանը:

Սիրական Տիգրանյանը 1921-23 թթ. եղել է ԵՊՀ հասարակագիտական ֆակուլտետի դեկանը, շատ թարգմանություններ է կատարել անգլերենից և ռուսերենից:

Նույն 1920 թ. հոկտեմբերի 25-ին համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկան, կարճ ժամանակ անց համալսարանի ռեկտոր, անվանի հայագետ Հակոբ Մանանդյանի նախաձեռնությամբ կայացած ժողովում, զեկուցողը՝ վաստակաշատ բանասեր Երվանդ Տեր Մինասյանը, առաջարկում է հատուկ ուշադրություն դարձնել հրատարակչական գործին՝ «Լույս ընծայել 360 մամուլ ծավալի գրականություն: Շարվածքի, տպագրության, թղթի, սրբագրման, հոնորարի ծախսերը պետք է կազմեն 19 մլն 610 հազ. ռուբլի»:

Լույս են տեսնում հայագիտական առաջին գրքերը, որոնց թվում են Դ. Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» և Արսեն Տերտերյանի «Հայոց նոր գրականության» առաջին մասը: 1920-ական թվականներին հրատարակված մի շարք գրքեր հայագիտության համար կոթողային արժեքներ են:

Լույս տեսան Մանուկ Աբեղյանի, Գրաչյա Աճառյանի, Լեոյի, Աշխարհբեկ Քալանթարի հայագիտական ուսումնասիրություններն ու ուսումնական ծեռնարկները:

1927 թ. սկսվեց հրատարակվել հայ լեզվաբանության անկյունաքարերից մեկը՝ Աճառյանի «Արմատական բառարանը», որի 7 հատորները ապակետիպ եղանակով լույս տեսան 10 տարիների ընթացքում: Հետագայում հրատարակվեցին նաև Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» երկու հատորները, Վանի, Նոր Նախիջևանի բարբառների քննությունները և այլն:

Գրահրատարակչությունը ԵՊՀ-ում գործել է անընդմեջ, չդադարեց անգամ 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին: 1941-1945 թթ. հրատարակվեցին Գր. Աճառյանի «Քննություն պոլսահայ բարբառի», Ա. Տերտերյանի «Աբովյանի ստեղծագործությունը», «Հայ կլասիկներ» ստվարածավալ (910 էջ) ուսումնասիրությունը և այլն:

Հայագիտության զարգացմանը նպաստեցին հետագա տարիներին ստեղծված «Քրեստոմատիաներ» և «Ուսանողի գրադարան» մատենաշարները:

«Քրեստոմատիաներ» մատենաշարով լույս տեսան «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ հին և միջնադարյան արձակ», «Հայոց լեզվի պատմություն» և այլ գրքեր: Էլ ավելի մեծ արձագանք ունեցավ «Ուսանողի գրադարան» մատենաշարը, որտեղ ի թիվս համաշխարհային դասականների, լույս տեսան նաև հայ մատենագիրների՝ Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու, Եղիշեի և ուրիշների երկերը՝ զրաբար և աշխարհաբար:

Վերահրատարակվեցին «Նոր հայկազեան բառարան», Ս. Չամչեանցի «Հայոց պատմութիւն» (երեք հատոր), Ա. Այտընեանի

«Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» ստվարածավալ հատորները, ԵՊՀ անվանի հայագետներ Էդ. Աղայանի, Մ. Սկրյանի, Մ. Ներսիսյանի և ուրիշների երկերը:

1990-ական թթ. սկզբներից, հատկապես վերջին 10 տարիներին, ԵՊՀ-ում լույս տեսան հետազոտություններ, որոնք մեծ ներդրում են հայագիտության ասպարեզում:

Հայաստանի տեղանունների առաջին ստուգաբանություններն արել է դեռևս Մովսէս Խորենացին: Տասնիններորդ դարի կեսերին Ղևոնդ Ալիշանը հեռավոր Վենետիկում ստեղծեց իր պատմաաշխարհագրական ստվարածավալ, մեծարժեք, պատկերազարդ հատորները: Լույս տեսան գերմանացի վաստակաշատ հայագետ Դ. Գյուբշմանի «Հին հայոց տեղւոյ անունները» ուսումնասիրությունը, Նշան Ծիվանեանի «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անուանց հավելեալ հայկական հատուկ անունք» բառարանը, Համբարձում Առաքելեանի «Հանրագիտական բառարանի» առաջին հատորը, Սկրտիչ Պոտուրեանի «Հայ հանրագիտակի» դարձյալ առաջին, և ցավոք, միակ հատորը: Սուքիաս Էփրիկյանը՝ Վիեննայում 1903 թ. լույս ընծայեց իր մեծարժեք «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանի» առաջին հատորը, ապա մի քանի տարի անց հրատարակեց երկրորդ հատորի առաջին մասը՝ մինչև Կ տառը: Ափսոս այս գործն էլ անավարտ մնաց:

Դրաչյա Աճառյանն իր ֆենոմենալ գիտելիքներով ու առասպելական աշխատասիրությամբ հրաժարվեց նման բառարան ստեղծելու մտքից, որովհետև այն իրականացնելու համար ինչպես ինքն է գրում. «Սովորական կյանքին պետք է ավելացնել մի քանի տասնյակ տարիներ»:

1949 թ. Երևանի պետական համալսարանի չորս ասպիրանտներ՝ Գևորգ Ջահուկյանը, Թադևոս Հակոբյանը, Ստեփան Մելիք-Բախշյանը և Դովհաննես Բարսեղյանը ձեռնարկում են այս գործը: Մի քանի տարի ուսումնասիրում են եղած նյութը, իսկ 1952-ից սկսում քարտագրման աշխատանքները:

Մոտ տասը տարի անց Գ. Ջահուկյանը դուրս է գալիս խմբից՝ քանի որ նշանակվում է Ակադեմիայի լեզվի ինստիտուտի տնօրեն: Մյուսները շարունակում են աշխատել և 1986-88 թթ. լույս են տեսնում առաջին երկու հատորները:

1989 թ. սկսվեց երրորդ հատորի շարվածքն ու այդպես էլ մնաց... մոտ տասը տարի: Մահացան հեղինակային խմբի դեկավար, աշխարհագրագետ Թ. Հակոբյանը, ավելի ուշ նաև պատմաբան Ստ. Մելիք-Բախշյանը:

Ի՞նչ էր լինելու բառարանի ծակատագիրը... Արդյո՞ք սա էլ մախորդների բախտին էր արժանանալու...

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն դոկտոր Ջավեն Եկալյանը որոշում կայացրեց ֆինանսավորել բառարանի երրորդ, չորրորդ և հինգերորդ հատորների տպագրությունը:

1998-2001 թ. լույս տեսան բառարանի 3-5-րդ հատորները:

2002 թ. հինգհատորյակն արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիստական արժեքների, այդ թվում հումանիտար գիտությունների, զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»:

Այդ բառարանի հրատարակությամբ սկսվեցին անվանի հայագետ ԵՊՀ շրջանավարտ, ԵՊՀ պատվավոր դոկտոր Ջավեն Եկալյանի օժանդակությամբ, Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայագիտական մատենաշարի հրատարակությունները, որոնց թիվը 2010-ին հասավ 110-ի:

2003 թ. ՀՀ Նախագահի մրցանակին նույն անվանակարգով արժանացավ նաև ԵՊՀ վաստակաշատ դասախոս, հմուտ լեզվագետ Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանը» (1200 մեծադիր էջ): Առաջին անգամ հոմանիշների հետ տրվում են բառերի բացատրությունները: Պարունակում է 130. 000 բառ և դարձվածքային միավոր: Բացատրվում են հոմանիշների բոլոր շարքերի ընդհանուր և մասնավոր իմաստները: Հոմանիշները զնահատված և կանոնակարգված են արդի հայերենի գործող կանոններին համապատասխան:

Հրատարակվեց մի շատ զարմանալի գիրք: Ի ծնե կույր լինելով՝ ԵՊՀ Հայագիտական ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Երջանիկ Գևորգյանը մոտ 25 տարիների ընթացքում ստեղծել էր «Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան» (Շարժութարան): Նման բառարան ունեն մի քանի ժողովուրդներ միայն՝ ֆրանսիացիները, անգլիացիները, շվեդները, իտալացիները, ռուսները: Հայկականը ծավալով ամենամեծն է: Նկարագրված է 645 շարժույթ, ծավալը 700 մեծադիր էջ: Յուրաքանչյուր շարժույթի բացատրության հետ տրվում է նաև գծանկար: Գիրքը 2004 թ. շահեց Վահան Թեքեյանի հեղինակավոր մրցանակը:

ԵՊՀ դասախոս Մ. Ն. Հարությունյանը գերմաներենից թարգմանել էր ականավոր լեզվաբան-հայագետ Հայնրիխ Յյուրշմանի հայագիտական ուսումնասիրությունները, որոնցում Յյուրշմանի առաջ քաշած հիմնական սկզբունքներն ու դրույթները, հատկապես հայերենը հնդեվրոպական ընտանիքում որպես առանձին ճյուղի գրաված դիրքի մասին հայտնի տեսությունը հեղաշրջող նշանակություն ունեցան ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպաբանության մեջ ընդհանրապես: Ինչպես բնութագրում է Ռյուդիգեր Շմիդտը գրքի առաջաբանում. «Հայնրիխ Յյուրշմանը արդի հայագիտության հայրն է և 1875 թ. Սյունիսենում գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովի առաջ կարդացած «Über die Steiung des Armenschen im Kreis der indogermanischen Sprachen» խորագիրը կրող գեկուցման համար նրան շնորհվեց Extraordinarius դոկտորի կոչում»:

Յյուրշմանը նախաձեռնել էր ստեղծել նաև հայերենի քերականություն՝ 3 հատորով (հայերենի ստուգաբանություն, բառապաշար և հնչյունաբանություն): Վաղաժամ մահը թույլ չտվեց ավարտել ծրագրված աշխատանքը (մահացավ 1908 թ.՝ 59 տարեկան հասակում): Հրատարակվեց առաջին մասը, որտեղ ընդգրկված է շուրջ 2000 բառի ստուգաբանություն (1971 հասարակ անուն և 217 հատուկ անուն): Գիրքը լույս տեսավ 2003 թ. ԵՊՀ դասախոս Դ. Ղուկասյանի թարգմանությամբ:

Հայնրիխ Չյուրշմանի աշակերտ, մեկ այլ գերմանացի նշանավոր հայագետ Յոզեֆ Կարստը 1901 թ. Ստրասբուրգում հրատարակել էր «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» գիրքը: 1980-ական թ. ԵՊՀ գիտաշխատող, ազգությամբ հրեա Դմիտրի Սլիվնյակը գերմաներենից հայերեն էր թարգմանել լեզվաբանական այս կարևոր ուսումնասիրությունը, որը լույս էր տեսել և ինքն էլ մշտական բնակության էր մեկնել Իսրայել:

Հրատարակչության գորոցներում պահպանված թարգմանության սևագիր օրինակից հնարավոր եղավ տպագրել Կարստի այս կարևոր աշխատությունը:

Ձավեն Եկավյանը մի շատ կարևոր առաջարկություն արեց. լույս ընծայել մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանի անտիպ ուսումնասիրությունները: Հրատարակվեց չորս գիրք, որոնց գիտական արժեքը շատ մեծ է: Ամենակարևորը, որ ավարտվեց Աճառյանի բազմահատոր, մեծարժեք ուսումնասիրության՝ «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» հրատարակությունը: Սևագիր ձեռագրերը վերծանելով հնարավոր եղավ լույս ընծայել ամփոփիչ 9-րդ հատորը: Այն ընդգրկում է իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն բաժինները, որոնք հեղինակը նախատեսել էր հրատարակել առանձին գրքերով:

Հայ բարբառագիտության համար շատ կարևոր ուսումնասիրություններ են Աճառյանի Ձեյթունի, Հաճընի, Սվեդիայի (Մուսա լեռ) բարբառների քննությունները, որոնք անտիպ էին և լույս տեսան մեկ գրքով «Քննություն Կիլիկիայի բարբառի» խորագրով: Բացի լեզվաբանական ուսումնասիրություն լինելուց, այն պարունակում է աշխարհագրական, պատմական, վիճակագրական տեղեկություններ, գրական նմուշներ բարբառներից, մատենագիտություն, յուրաքանչյուր բարբառի բառարան և այլն: Այս աշխատությունն Աճառյանը ավարտել էր դեռևս 1948 թ. օգոստոսի 6-ին: Այն լույս տեսավ ավելի քան հիսուն տարի անց:

1890-ական թվականներից Պոլսում Աճառյանը սկսել էր գրի առնել պոլսահայ ժողովրդական անգիր բանահյուսության նմուշ-

ներ: Վերջապես այն լույս տեսավ 2009 թ.՝ ավելի քան հարյուր տարի հետո:

Անտիպ էր Աճառյանի «Չայոց պատմություն հյուսված ընդհանուր պատմության հետ» 500 էջանոց աշխատությունը, որը ևս լույս տեսավ Կյուլպենկյան մատենաշարով:

Անտիպ, սևագիր, ծեռագիր վիճակում էին մեկ այլ նշանավոր հայագետի՝ Գրիգոր Ղափանցյանի երկու աշխատությունները՝ Չր. Աճառյանի «Արմատական բառարանի առթիվ դիտողություններ» և 1944 թ. լույս տեսած Արա Գեղեցիկի մասին ուսումնասիրության ռուսերեն թարգմանությունը, որտեղ կան զգալի լրացումներ:

Առաջին անգամ աշխարհաբարով լույս տեսան հայ երկու նշանավոր պատմիչների՝ Ասողիկի և Վարդան Արևելցու նույնանունը՝ «Տիեզերական պատմությունները»:

Բանասեր, արվեստաբան Բախտիար Չովակիմյանը, մոտ վաթսուներե տարի զբաղվել էր մի շատ ծանր գործով՝ վերծանել հայ հեղինակների ծածկանունները: Պարզել էր 8000 հեղինակի 28000 ծածկանուն: Գիրքը մեծ հետաքրքրություն ներկայացրեց և այսօր հայ մտավորականների սեղանի գիրքն է:

«Նոր հայկազեան բառարանի» հրատարակությունից հետո ԵՊՉ դասախոս, բան. գիտ. դոկտոր-պրոֆեսոր Ռուբեն Ղազարյանն առաջինն էր, որ համարձակվեց ստեղծել գրաբարի բառարան՝ երկու հատորով: Նույն հեղինակը հայ իրականությունում առաջին անգամ կազմեց «Գրաբարի հոմանիշների բառարան»: Ընդգրկված են հոմանիշ բառեր, որոնք մասնավորապես գործածություն են գտել հայ մատենագիտության 5-11-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական գործերում:

Չայագիտության համար մեծ կարևորություն է ներկայացնում նաև նույն Ռ. Ղազարյանի (Չ. Ավետիսյանի հետ համատեղ) «Միջին հայերենի բառարանի» երկրորդ, լրացված և բարեփոխված հրատարակությունը:

Որքան էլ տարօրինակ է հազարամյակներ հարևանությամբ ապրել են հայերն ու վրացիները, սակայն «Վրացերեն-հայերեն բառարան» առաջին անգամ թե հայ, թե վրաց իրականություն-

նում լույս տեսավ ԵՊՀ-ում՝ 2005 թ.: Հեղինակը ԵՊՀ շրջանավարտ վրացի բանասեր Ռամազ Գորգաձեն է: Բառարանն ընդգրկում է շուրջ 40 հազար բառահոդված՝ համապատասխան բառակապակցություններով: Ջետեղված են նաև անձնանունների և տեղանունների ցանկեր:

Մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցի «Երկերի» հինգհատորյակի արդեն լույս տեսած չորս հատորները կարևոր ներդրում են ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր պատմագիտության համար:

Երկերում բացի մամուլում տպագրված աշխատություններից տեղ են գտել նաև Ադոնցի առաջօր անտիպ և հայերեն չթարգմանված գործերը՝ հիմնականում ֆրանսերենով գրված: Ֆրանսերենից են թարգմանված «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ» աշխատությունը, որն Ադոնցը գրել է 1940 թ. Բրյուսելում, «Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթևը», «Տարկուն հին հայերի մոտ» և այլն:

Լեզվաբանական ուսումնասիրություններից պետք է առանձնացնել «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» մեծարժեք գործը, որն Ադոնցը գրել և հրատարակել էր ռուսերեն: Հայերեն թարգմանել է ԵՊՀ դասախոս Օլգա Վարդազարյանը: Աշխատությունը գրվել է 1910-1915 թթ. Պետրոգրադում, լույս է տեսել «Bibliotheca Armeno Georgica» մատենաշարով: Ադոնցը այն որպես դոկտորական ատենախոսություն պաշտպանել է Ռուսաստանի Գիտությունների կայսերական ակադեմիայում:

Ընդգրկված են նաև ականավոր հայագետի վերջին ուսումնասիրությունը՝ «Քննական պատմություն Հայոց» քառահատոր երկի առաջին մասը, ինչպես նաև հատվածներ հաջորդ հատորներից, որոնցից երեքը առաջին անգամ են թարգմանվել ֆրանսերենից. «Հայաստանը հռոմեապարթևական հակամարտության ոլորտում», «Կրասոսն ընդդեմ Պարթևների» և «Բյուզանդապարսկական հարաբերությունները և Հայաստանը»:

Տպագրության փուլում է Ադոնցի «Երկերի» 5-րդ հատորը, որտեղ առաջին անգամ լույս կտեսնի ֆրանսերենից հայերեն

թարգմանված «Հայ բյուզանդական նոթեր» ծավալուն ուսումնասիրությունը (400 էջ):

Ադոնցի հինգհատորյակը հրատարակության պատրաստել, խմբագրել և ծանոթագրությունները կազմել է ԵՊՀ դասախոս, հմուտ պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը:

Ջ. Եկավյանի նախածեռնությամբ և հովանավորությամբ տպագրվում է «Մատենագիրք հայոց» մատենաշարը, որը հսկայական ներդրում է հայագիտության ասպարեզում:

Նախատեսվում է հրատարակել V-XVIII դարերի հայ մատենագիրների քննական բնագրերը: ԵՊՀ հրատարակչության կողմից պատրաստվել են ութ հատորներ՝ յուրաքանչյուրը 1000-1200 էջ ծավալով: Մատենաշարը տպագրվում է Բեյրութում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության տպագրատանը՝ հազար օրինակ տպաքանակով:

Մի ամբողջ հատոր նվիրված է հանձարեղ Գրիգոր Նարեկացուն: Այստեղ ևս կան նոր բնագրեր:

Մատենաշարում առանձնանում է հատկապես 10-րդ հատորը, որը ներկայացնում է X դարի հայ մատենագիտության մի խոշոր մասը՝ Նարեկյան դպրոցի երկու նշանավոր ներկայացուցիչների՝ Խոսրով Անձևացու և Անանիա Նարեկացու երկերը և մեկ տասնյակի հասնող հեղինակների գործեր: Հատորի ճնշող մեծամասնությունը նոր քննական բնագրեր են, որոնք բանասիրական-բնագրագիտական ժառանգություն են, որը, և բնականաբար, ընդլայնում է հետազոտությունների դաշտն իբրև բացառիկ սկզբնաղբյուրների ժողովածու:

2009 թ. լրացավ Ադանայի կոտորածների 100-ամյակը:

Հայաստանում առաջին անգամ լույս տեսավ այդ ողբերգական իրադարձությանը նվիրված մենագրություն. «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)», որի հեղինակը վաստակաշատ պատմաբան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանն է: Գիրքը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում:

Լույս տեսավ նաև Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» պատմագիտական կարևոր ուսումնասիրության

3-րդ հատորը, որտեղ հանգամանորեն լուսաբանված են 1907 թ. հուլիս – 1908 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում հայկական կյանքում տեղի ունեցած ազգային-ազատագրական պայքարի դեպքերը (1128 էջ, 2009 թ.):

Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայագիտական մատենաշարով լույս են տեսել նաև այլ արժեքավոր ուսումնասիրություններ:

Առաջին անգամ պատմաաշխարհագրական մենագրություն տպագրվեց հայկական լեռնաշխարհի մասին (հեղ. Յրաչյա Գաբրիելյան):

Պատմագրական լուրջ ուսումնասիրություն է ԳԳ ՉԱԱ թղթակից անդամ Բ. Յարությունյանի «Մեծ Չայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի»» գիրքը: Փաստական մեծ նյութ է պարունակում «Ժուռնալ Ազիատիկ» (JOURNAL ASIATIQUE) հանդեսի հայագիտական նյութերի մատենագիտությունը, որն ընդգրկում է 1822-1985 թթ. տվյալները (կազմող Է. Ղուկասյան): Գիրքը լույս է տեսել ռուսերեն: Իսկ վահան Տեր-Ղևոնդյանի «Կիլիկյան Չայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները` (1145-1226 թթ.)» պատմագիտական ուսումնասիրությունը լույս է տեսել ֆրանսերենով: Արժեքավոր է նաև «Գրիգոր Ջոհրապը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» ժողովածուն, որը կազմել է ԵՊԳ դասախոս Ալբերտ Շարուրյանը:

ԳԳ ՉԱԱ թղթակից անդամ Սարգիս Յարությունյանի աշխատասիրությամբ առաջին անգամ լույս տեսավ «Չայ հնայական և ժողովրդական աղոթքներ» ժողովածուն, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ ժողովրդի ֆոլկլորն ուսումնասիրող ազգագրագետների, բանագետների, ինչպես նաև հոգևոր մշակույթով հետաքրքրվողների համար: Սաթենիկ Գեջյանի «Անի. մատենագիտություն» գրքում ընդգրկված են Չայոց հռչակավոր մայրաքաղաքին վերաբերող 1775-1995 թթ. հայերեն և օտար լեզուներով հրատարակված գրքերի, հոդվածների և այլ նյութերի մասին տեղեկություններ:

Պատմագիտական լուրջ հետազոտություն է Ալբերտ Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV-XVII դարե-

րում» ուսումնասիրությունը: Հայերեն լեզվով առաջին անգամ լույս տեսավ Գր. Միքայելյանի «Կիլիկիայի հայկական պետության պատմությունը», որը ռուսերենով հրատարակվել էր 1952 թ.: Ինչպես վկայում է հեղինակը, Կիլիկիայի երեքհարուրամյա պատմությունն ուսումնասիրել է անվանի հայագետ Հակոբ Մանանդյանի առաջարկով: Լույս է տեսել Ստ. Պողոսյանի «Հայոց ցեղասպանության պատմություն» եռահատոր աշխատությունը:

Կյուլպենկյան մատենաշարով լույս տեսած գրքերից հիշատակության արժանի են նաև Հր. Հարությունյանի «Շուշիի XVIII-XIX դդ. տապանագրեր», Հակոբ Չոլաքյանի «Քեսապի բարբառը», Ստ. Մելիք-Բախշյանի «Հայոց պաշտամունքային վայրեր», Գառնիկ Ստեփանյանի «Երզնկա», «Ամերիկահայ թատրոնի պատմություն» և այլ հայագիտական գրքեր:

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հիմնադիր-դեկան գերաշնորհ Շահե արքեպիսկոպոս Աճենյանը ստեղծեց «Աճենյան» մատենաշարը, որը հրատարակեց մեկ տասնյակից ավելի հայագիտական արժեքավոր գրքեր:

Պետական պատվերով լույս տեսած գրքերից հիշատակության արժանի են Ավետիս Ահարոնյանի «Սարդարապատից մինչև Սևր և Լոզան» հուշագրությունը, Ալբ. Մուշեղյանի «Մովսես Խորենացու դարը», Կորյունի «Վարք Մաշտոցին»՝ աշխարհաբար, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով, «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին» ժողովածուն և այլն:

Վերջին տարիներին ԵՊՀ-ն ֆինանսական նկատելի հատկացումներ է անում գրահրատարակչական գործին:

Հայագիտությանն առնչվող կրթական և գիտական գրքերի թիվն ամեն տարի անցնում է երկու տասնյակից: Ֆակուլտետների խորհուրդների կողմից հրատարակության երաշխավորված գրեթե բոլոր գրքերը լույս են տեսնում:

ԵՊՀ-ում տասնյակ տարիներ գործել է Հայագիտական կենտրոն: Վերջերս այն վերանվանվեց ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ: Սա լուրջ անվանափոխություն է: Այսօր հայագիտության հարցը խիստ հրատապ է ինչպես

պատմագիտական, այնպես էլ քաղաքական նկատառումներով: Ինստիտուտի թեմատիկ պլանում կան շատ գործեր, որոնք նկատելի ներդրում կլինեն հայագիտության զարգացման գործում:

Արդեն լույս են տեսել “Армянский вопрос и Геноцид армян, библиография (1998-2007)”, составитель Э. Бабалян, **Յակոբ Քյունցլերի «Երեսուն տարի ծառայություն Արևելքում» (գերմաներենից թարգ. Դ. Սաքայանը և Է. Մակարյանը), «Տասը հարց և տասը պատասխան» (Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների մասին արձանագրություններ), Վիլհելմ Բաումի «Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները (Անցյալը – Ցեղասպանությունները – Ներկան նվիրված ԵՄ-ի ընդարձակման բանավեճին)», “Всесоюзные газеты о проблеме Нагорного Карабаха (1988-1991 гг.)” մատենագիտական ժողովածուն և այլ գրքեր:**

Հայագիտության զարգացմանը նպաստում են նաև ԵՊՀ-ում լույս տեսնող պարբերականները: Հատկապես «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը, ինչպես նաև Աստվածաբանության, Պատմության ֆակուլտետների տարեգրքերը, «Համատեքստը», «Արևելագիտության հարցեր», «Զարեհցյան ընթերցումներ», «Декабрьские литературные чтения» ամենամյա պարբերական հրատարկությունները:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

**ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ Ա. Դ. ՄԻՍՈՆՅԱՆ**

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. **Աբաջյան Ա.** - Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, 444 էջ, 2006 թ.:
2. **Արզարյան Գ.** – Հայ տպագրության նախապատմություն, 76 էջ, 2001 թ.:
3. **Աթաբեկյան Ս. Ա.** - Ակսել Բակունց. պատմվածքի վիպական աշխարհը, 306 էջ, 1996 թ.:
4. **Աթայան Էդ.** - Միջազգային գիտաժողով, Աթայանական ընթերցումներ, դրույթներ, 82 էջ, 2007 թ.:
Գիտաժողովը կայացել է ԵՊՀ-ում 2007 թ. հոկտեմբերի 1-3-ը Է. Աթայանի ծննդյան 75-ամյակի կապակցությամբ:
5. **Աթայան Էդ.** - Միջազգային գիտաժողով, Աթայանական ընթերցումներ, զեկուցումների ժողովածու, 400 էջ, 2010 թ.:
Ժողովածուում ընդգրկված են ակադեմիկոս Էդ. Աթայանի ծննդյան 75-ամյակի առթիվ ԵՊՀ-ում 2007 թ. հոկտեմբերի 1-3-ը կայացած միջազգային գիտաժողովում կարդացված 40 զեկուցումները:
6. **Աթայան Էդ.** - Կենսամատենագիտություն, 32 էջ, 2007 թ.:
7. **Աղաբեկյան Կ. Բ.** - Արդի հայ արձակի զարգացման միտումները (1960-1980), 375 էջ, 1992 թ.:
8. **Աղաբեկյան Կ. Բ.** – Հակոբ Օշական (ստեղծագործական աշխարհի արահետներում), 274 էջ, 2006 թ.:

9. Աղայան Էդ. – Լեզվաբանական հետազոտություններ, 424 էջ, 2003 թ.:

Նշանավոր լեզվաբան-հայագետի տեսական լեզվաբանությանը, լեզվաբանական մտքի զարգացման պատմությանը և հայերենագիտությանը վերաբերող քսան ուսումնասիրությունների ժողովածու:

10. Աղբալյան Ն. – Ընտրանի, 362 էջ, 2005 թ.:

Ընդգրկում է հայ և արտասահմանյան գրականությանը, լեզվաբանական հարցերին նվիրված շուրջ երեսուն ուսումնասիրություններ և հոդվածներ (կազմող Գ. Անանյան):

11. Աճառյան Հր. – Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների (իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն), հատ IX, 352 էջ, 2005 թ.:

12. Աճառյան Հր. (կազմող) - Պոլսահայ անգիր բանահյուսություն, 274 էջ, 2009 թ.:

13. Աճառյան Հր. - Քննություն Կիլիկիայի բարբառի՝ Ձեյթունի, Հաճընի, Սվեդիայի (Մուսա Լեռան) բարբառները, 600 էջ, 2003 թ.:

14. Այվազյան Ս. – Ուրարտերեն – հայերեն բառապաշարը և պատմահամեմատական քերականություն, 400 էջ, 2008 թ.:

Աշխատությունը նվիրված է Վանի սեպագիր արձանագրությունների լեզվի՝ ուրարտերենի և հայերենի փոխհարաբերությունների խնդրին:

15. Անանյան Գ. Գ. - Ակնարկներ հայ հին և միջնադարյան հրապարակախոսության, 304 էջ, 2005 թ.:

16. Անանյան Գ. Գ. – Հրապարակախոսություն և քննադատություն, հոդվածների ժողովածու, 378 էջ, 1996 թ.:

17. **Անանյան Գ. Գ.** - Միջնորդ Աստժոյ և մարդկան (ժողովածու), 156 էջ, 2006 թ.:

18. **Անանյան Գ. Գ.** - Նիկոլ Աղբալյան, մենագրություն, 314 էջ, 2005 թ.:

19. **Անանյան Ն.** - Արդի հայ արձակը բեմում, 74 էջ, 1992 թ.:

20. **Ասլանյան Վ., Հայրապետյան Հ.** - ԵՊՀ Գիտական գրադարանը, 62 էջ, 2001 թ.:

21. **Ավագյան Ա.** - Կոստան Ջարյան. կյանքը և գործը, 294 էջ, 1998 թ.:

22. **Ավագյան Ա.** - Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, 250 էջ, 2005 թ.:

23. **Ավագյան Ա.** - Սփյուռքահայ դասական պատմվածքը, 288 էջ, 2007 թ.:

24. **Ավետիսյան Զ.** - Նարեկացու Մատյանը, 148 էջ, 2005 թ.:

25. **Ավետիսյան Յու. Ս.** - «Անահիտ» հանդեսը, 228 էջ, 1999 թ.:
Փարիզում Ա. Չոպանյանի հրատարակած «Անահիտ» հանդեսում լույս տեսած հայագիտական նյութերի վերլուծությունը:

26. **Ավետիսյան Յու. Ս.** - Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, մենագրություն, 290 էջ, 2007 թ.:

27. **Ավետիսյան Յու. Ս.** - Արևմտահայ բանաստեղծության լեզուն, մենագրություն, 504 էջ, 2002 թ.:

28. **Արաքս (Ալեքսանյան) Կամո** - Աշխարհագրությունը և գրականությունը, 146 էջ, 2008 թ.:

Հայ գրական ստեղծագործությունների և աշխարհագրական հայերենագիտական նյութերի համադրում և վերլուծություն:

29. **Արևելագիտության հարցեր**, հատոր 6, 380 էջ, 2006 թ.:
Հողվածների ժողովածու, որտեղ արևելագիտության հարցերն առնչվում են հայագիտության հետ:
30. **Բադիկյան Խ.** - Դարձվածային ոճաբանություն, 210 էջ, 2000 թ.:
31. **Բայրամյան Հր.** - Հայ-վրաց բանասիրության և պատմամշակութային առնչություններ, հողվածների ժողովածու, 208 էջ, 2010 թ.:
32. **Բարխուդարյան Վ. Բ., Վարդանյան Ռ. Հ., Կարախանյան Գ. Հ.** – Շահե արքեպիսկոպոս Աճեմյան. կյանքը և գործը, 224 էջ, 2001 թ.:
33. **Բարսեղյան Գ.** - Սպորտային լրագրության լեզվաբանական առանձնահատկությունները, 220 էջ, 2010 թ.:
34. **Բեքմեզյան Ալվարդ** - Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակույթում, 158 էջ, 2007 թ.:
35. **Բրուտյան Ա.** - Արևելահայ մանկավարժական մամուլը, 152 էջ, 2009 թ.:
36. **Գաբրիելյան Յու. Մ.** - Հայերենի ցեղակցության հարցը, 104 էջ, 1991 թ.:
37. **Գաբրիելյան Վ. Ա.** - Դանիել Վարուժան. կյանքը և գործը, 430 էջ, 1991 թ.:
38. **Գաբրիելյան Վ. Ա.** - Սփյուռքահայ դասական պատմըվածք, գիրք 1-ին, 402 էջ, 2007 թ.:
39. **Գագինյան Ա. Ռ.** - Յոզեֆ Կարստի լեզվաբանական հայացքները, 128 էջ, 2008 թ.:

40. **Գալստյան Ա. Ս.** – Փոխաբերական հոգելեզվաբանական վերլուծություն, 118 էջ, 2008 թ.:

41. **Գյուլբուդադյան Ս.** - Արևելահայերենի քերականագիտության պատմություն, 212 էջ, 2009 թ.:

42. **Գրական համալսարան**, (կազմ. **Վ. Մաղալյան**), գիրք 9-րդ, 248 էջ, 1999 թ.:

43. **Գրական համալսարան**, գիրք 10-րդ, նվիրված ԵՊՀ 85-ամյակին, (կազմ. **Վ. Մաղալյան**), 450 էջ, 2005 թ.:

44. **Գրական համալսարան**, գիրք 11-րդ, նվիրված ԵՊՀ 90-ամյակին, (կազմ. **Վ. Մաղալյան**), 492 էջ, 2009 թ.:

45. **Գրիգոր Լուսավորիչը ներբողներում** - (կազմողներ՝ Մադոյան Ա. Գ., Մադոյան Գ. Ա.) - 118 էջ, 2002 թ.:

46. **Գրիգորյան Ս. Զ.** - Ժամանակակից խորհրդահայ պոեմը (1960-1980 թթ.), 175 էջ, 1990 թ.:

47. **Գրիգորյան Ս.** - Հայերեն գունանունները բույսերի և կենդանիների անվանումներում, 78 էջ, 2007 թ.:

48. **Դիլբարյան Ն., Խաչատրյան Ա.** - Հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, 92 էջ, 2007 թ.:

49. **Դոլուխանյան Ա.** - Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, 268 էջ, 2008 թ.:

Հավելված բաժնում գետեղված են Ֆեյդիի «Սասունցի Դավիթ» էպոսի, Հեթում պատմիչի «Ծաղիկ պատմութեանց արևելեան աշխարհի» գրքին նվիրված հոդվածների ֆրանսերենից կատարված թարգմանություններ և նմուշներ Ֆեյդիի տպագրած հմայիլներից:

50. **Եզեկյան Լ.** - Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն (19-րդ դար) 442 էջ, 1990 թ.:

51. Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, հունանիտար գիտություններ, 208 էջ, 2000 թ.:

52. Թամրազյան Յ. Ս. - Երկեր, հատ. Բ, 984 էջ, 2009 թ.:

Գրքում տեղ են գտել ԵՊՀ վաստակաշատ դասախոս, ակադեմիկոս Յ. Թամրազյանի` Հովհաննես Թումանյանին, Վահան Տերյանին, Եղիշե Չարենցին և Դերենիկ Դեմիրճյանին նվիրված գրականագիտական ծավալուն մենագրությունները:

53. Թամրազյան Յ. Ս. - Երկեր, հատ. Գ, 768 էջ, 2010 թ.:

Հատորում ընդգրկված են արևմտահայ բանաստեղծների (Սիամանթո, Դուրյան, Մեծարենց, Վարուժան), ինչպես նաև խորհրդահայ շրջանի գրողներին (Ա. Բակունց, Ստ. Ջորյան, Ա. Իսահակյան և այլն) նվիրված գրականագիտական ուսումնասիրությունները:

54. Թամրազյան Յ. Ս. - Հակոբ Ասատուրյան. կյանքը և գործը, 144 էջ, 1993 թ.:

55. «Ժուռնալ Ազատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն (կազմող Է. Ղուկասյան), 240 էջ, 2004 թ.:

Գիրքն ընդգրկում է Փարիզում հրատարակվող Journal Asiaticque հեղինակավոր հանդեսում 1822-1985 թթ. լույս տեսած հայագիտությանը վերաբերող նյութերը (ռուսերեն):

56. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Ա, 252 էջ, 1999 թ.:

57. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Բ, 212 էջ, 2001 թ.:

58. Ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Գ, 250 էջ, 2002 թ.:

59. **Ժուռնալիստիկա** (տեսության և պատմության հարցեր),
պրակ Դ, 252 էջ, 2003 թ.:

60. **Ժուռնալիստիկա** (տեսության և պատմության հարցեր),
պրակ Ե, 242 էջ, 2003 թ.:

61. **Ժուռնալիստիկա** (տեսության և պատմության հարցեր),
պրակ Զ, 190 էջ, 2005 թ.:

62. **Ժուռնալիստիկա** (տեսության և պատմության հարցեր),
պրակ Է, 160 էջ, 2006 թ.:

63. **Ժուռնալիստիկա** (տեսության և պատմության հարցեր),
պրակ Ը, 262 էջ, 2007 թ.:

64. **Ի սկզբանե էր բանն** (հեղ. խումբ), (Ժուռնալիստիկայի և
գրականության հարցեր), 170 էջ, 2005 թ.:

65. **Խաչատրյան Պ. Մ.** - Նարեկի միջնադարյան լուծմունքը,
210 էջ, 1990 թ.:

66. **Խոսք Ն. Աղայանի մասին**, 388 էջ, 2005 թ.:
Գրականագիտական հոդվածներ՝ գրող, գրականագետ Նորայր Աղայանի ստեղծագործության մասին:

67. **Խրիմյան Հայրիկ** - Երկեր, (կազմ. Հ. Բ. Պետրոսյան, Ա.
Գ. Մադոյան), 447 էջ, 1992 թ.:

68. **Խուղավերդյան Ա.** – Մելքիսեդեք Արքեպիսկոպոս Մուրադյանցը խմբագիր և հրապարակախոս, 166 էջ, 2009 թ.:

69. **Կարստ Յոզեֆ** – Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, գերմ. թարգմ. Դմիտրի Սլիվնյակ, (հրատ. պատրաստ. Ռ. Ս. Ղազարյան), 410 էջ, 2002 թ.:

Գերմանացի նշանավոր լեզվաբան-հայագետի աշխատությունը նվիրված է կիլիկյան հայերենի հնչյունաբանության և ձևաբանության հարցերին:

70. **Հակոբյան Հ.** - Եղեռնի դատապարտումը Րաֆֆու ստեղծագործություններում, 350 էջ, 1999 թ.:

71. **Հակոբյան Պ.** - Հայագիտական ուսումնասիրություններ, հոդվածների ժողովածու, 492 էջ, 2003 թ.:

72. **Համատեքստ-2002** - գիտական հոդվածների ժողովածու, 176 էջ, 2002 թ.:

Արտասահմանյան և հայ գրականությանն առնչվող հարցեր:

73. **Համատեքստ-2003** - գիտական հոդվածների ժողովածու, նվիրված է ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի ծննդյան 80-ամյակին, 300 էջ, 2004 թ.:

74. **Համատեքստ-2007** - գիտական հոդվածների ժողովածու, 392 էջ, 2008 թ.

75. **Հայ գրերի** գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված գիտական և ուսումնական միջազգային գիտաժողովի նյութեր, 196 էջ, 2005 թ.:

76. **Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները** (գիտաժողովի զեկուցումների թեզիսները), 294 էջ, 2003 թ.:

77. **Հայրապետյան Ա. Պ.** - Ածանցավոր ածականների խոսքիմասային փոխանցումները ժամանակակից հայերենում, 112 էջ, 1991 թ.:

78. **Հանանյան Գ. Կ.** - Սվեդիայի բարբառը: Խտրբեկի խոսվածք, 208 էջ, 1995 թ.:

79. **Հարությունյան Ն. Կ.** - Առաքել Բահաթրյան. կյանքը և գործը, 120 էջ, 1992 թ.:

80. **Հյուբշման Հ.** - Հայագիտական ուսումնասիրություններ, 520 էջ, 2003 թ.:

Ժողովածուն ընդգրկում է գերմանացի ականավոր լեզվաբան-հայագետ (նաև իրանագետ) Հ. Հյուբշմանի 1875-1906 թ. տարբեր հանդեսներում տպագրված ավելի քան քսան հայագիտական ուսումնասիրություն (գերմաներենից թարգմ. Մ. Ն. Հարությունյանը):

81. **Հյուբշման Հ.** - Հայագիտական ուսումնասիրություններ, (կազմ. Է. Լ. Մկրտչյան) 202 էջ, 1990 թ.:

82. **Հյուբշման Հ.** - Հայերենի քերականություն, մաս I, Հայերենի ստուգաբանությունը, 604 էջ, 2003 թ.:

83. **Հովակիմյան Ա.** - Պոետիկայի հարցեր. Համո Սահյան, 200 էջ, 2008 թ.:

84. **Հովհաննիսյան Լ.** - Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար), 230 էջ, 2008 թ.:

85. **Ղազարյան Ռ. Ս.** - Լեզվաբանական ուսումնասիրություններ, 432 էջ, 2010 թ.:

86. **Ղազարյան Ռ. Ս.** - Միջին հայերենի բառապաշարը, 47 էջ, 1993 թ.:

87. **Ղազարյան Ռ. Ս.** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 228 էջ, 2001 թ.:

88. **Ղազարյան Ռ.** - Պատանեկության թեման գրողի գեղարվեստական համակարգում (Ջերոմ Սելինջեր – Ստեփան Ջորյան), 148 էջ, 2010 թ.:

89. **Ղազարյան Ս.** - Հայոց լեզվի համառոտ պատմություն, 3-րդ հրատ., 426 էջ, 2006 թ.:

90. **Ղափանցյան Գրիգոր** - Անտիպ գործեր. Արմատական բառարանի առթիվ դիտողություններ, *Ара Прекрасный: мифотворческий образ у армян*, 218, էջ, 2009 թ.:

91. **Մաղոյան Ա. Գ.** - Ջավակներ լուսի, առաքինության, 106 էջ, 2001 թ.:

92. **Մաղոյան Գ. Ա.** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 176 էջ, 2001 թ.:

93. **Մաթևոսյանական ընթերցումներ** (հեղ. խումբ) 182 էջ, 2006 թ.:

Չրանտ Մաթևոսյանի ստեղծագործություններին նվիրված ժողովածու՝ գրողի ծննդյան 70-ամյակի առթիվ:

94. **Մակարյան Ա.** - Արևմտահայ գրական դիմանկարը, 307 էջ, 2002 թ.:

95. **Մակարյան Ա.** - Հարություն Ալամդարյան, 192 էջ, 2005 թ.:

96. **Մանանդյան Հ.** - Երկեր, հատոր Է, բանասիրական ուսումնասիրություններ, 580 էջ, 2010 թ.:

97. **Մանուկյան Գ. Մ.** - Նախդրագործությունը 5-10-րդ դարերի և միջինհայերենյան հայոց չափածոյում, 194 էջ, 2005 թ.:

98. **Մատենագիտություն** - Հայագիտական հրատարակությունները ԵՊՀ-ում (1990-2010 թթ.), (կազմ. Պ. Ստեփանյան) 64 էջ, 2010 թ.:

99. **Մատենագիտություն** «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի, 1967-1996 թթ., (կազմ. Լ. Ավետիսյան, Վ. Մաղալյան), 205 էջ, 1997 թ.:

100. **Մատենագիտություն** Երևանի համալսարանի հայագիտական կենտրոնի հրատարակությունների, (կազմ. Է. Մակարյան, Լ. Բաբախանյան), 68 էջ, 1999 թ.:

101. **Մատենագիտություն** Երևանի համալսարանի հրատարակչության (1922-2002 թթ.), 152 էջ, 2002 թ.:

102. **Մատենագիտություն** ԵՊՀ հրատարակությունների (1919-1999 թթ), պրակ 6, 292 էջ, 1999 թ.:

103. **Մատենագիտություն** ԵՊՀ հրատարակությունների, պրակ 7 (1991-1995), 168 էջ, 2001 թ.:

104. **Մատենագիտություն** ԵՊՀ հրատարակությունների, պրակ 8, (1996-2000), 346 էջ, 2004 թ.:

105. **Մատենագիտություն** ԵՊՀ հրատարակությունների, պրակ 9, (2001- 2005 թթ.), 400 էջ, 2008 թ.:

106. **Մատենագիտություն** ԵՊՀ-ում պաշտպանված ատենախոսությունների, պրակ 6, (1990-1994), 150 էջ, 2007 թ.:

107. **Մատենագիտություն** ԵՊՀ-ում պաշտպանված ատենախոսությունների, պրակ 7, (1995-2004 թթ.), 236 էջ, 2009 թ.:

108. **Մատենագիտություն** ԵՊՀ-ում պաշտպանված ատենախոսությունների, պրակ 8, (2005-2008), 200 էջ, 2010 թ.:

109. **Մարտիրոսյան Ն. Ն.** - «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920-30-ական թթ.), 56 էջ, 2001 թ.:

110. **Մելիքսեթյան Լ., Գոնչար Ն.** - Վիլյամ Սարոյան, անգլերեն և ռուսերեն, 90 էջ, 2008 թ.:

111. **Մեծունց Բ.** - Հոգնակիակազմ հիմքերի և հոգնակիի ձևախմբաստային դրսևորումները հայերենում, 323 էջ, 2003 թ.:

112. **Մեյթիխանյան Փ.** - Աստվածաշնչի հատկանվանագիտություն, տառադարձություն և ուղղագրություն, 118 էջ, 2008 թ.:

113. **Միրզոյան Յ. Ղ.** – Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 272 էջ, 2001 թ.:

114. **Միրզոյան Յ. Ղ.** – Նարեկացիագիտական հետազոտություններ, 400 էջ, 2010 թ.:

115. **Միրզոյան Հրաչիկ Ղազարի.** Կենսամատենագիտություն (կազմ. Հ. Հայրապետյան), 96 էջ, 2010 թ.:

116. **Մխիթարյան Լ.** - Ազգային ինքնաճանաչողությունը Հ. Թումանյանի հրապարակախոսություններում, 150 էջ, 2007 թ.:

117. **Մխիթարյան Մ.** - Նալբանդյանագիտության հարցեր, ժողովածու, 138 էջ, 2008 թ.:

118. **Մխիթարյան Ս.** - 10-11-րդ դ. հայ մշակութային դաշտը և գրականության զարգացման առանձնահատկությունները, 372 էջ, 2009 թ.:

119. **Մնացականյան Լ. Հ.** - Հոդվածներ, ուսումնասիրություններ, 250 էջ, 2007 թ.:

120. **Մնացականյան Լ. Հ.** - Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, 356 էջ, 1990 թ.:

121. **Մուրադյան Ա.** - Գրական հանգրվաններ, 1-ին գիրք (գրականագիտական հոդվածների ժողովածու), 488 էջ, 2003 թ.:

122. **Մուրադյան Ա.** - Գրական հանգրվաններ, 2-րդ գիրք (գրականագիտական հոդվածների ժողովածու), 380 էջ, 2007 թ.:

123. **Մուրադյան Ա.** - Գրական հանգրվաններ, 3-րդ գիրք (գրականագիտական հոդվածների ժողովածու), 390 էջ, 2010 թ.:

Գիրքը նվիրված է Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցին ու միլիոնավոր անմեղ մահատակների հիշատակին:

124. **Մուրադյան Ա.** - Երվանդ Օտյան. Կյանքը և գործը, 472 էջ, 2010 թ.:

125. **Նահապետ Քուչակի** բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Յ. Ս. Թամրազյանի 648 էջ, 2001 թ.:

126. **Ներսիսյան Վ.** - Հայ միջնադարյան ժանրերն ու տաղաչափությունը (X–XVII դարեր), 228 էջ, 2008 թ.:

127. **Ներսիսյան Ն. Վ.** - Շարահյուսական կառույցները և դրանց ոճական արժեքը Ա. Բակունցի պատմվածքներում, 128 էջ, 2008 թ.:

128. **Նշխարներ Արցախի** բանահյուսության (կազմ. Լ. Յ. Հարությունյան), 398 էջ, 1991 թ.:

129. **Նոր տետրակ**, որ կոչվում է հորդորակ (կազմ. Յ. Շահամիրյան, Մ. Բաղրամյան, գրաբ. թարգմ. Պ. Մ. Խաչատրյան), 262 էջ, 1991 թ.:

130. **Շարական**, ժողովածու (գրաբարից աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյան և Գ. Մադոյան), 612 էջ, 2001 թ.:

131. **Շարուրյան Հ., Մելքոնյան Ն., Հայրապետյան Մ.** - Լեզվաբանությունը գործնականում, 128 էջ, 2008 թ.:

132. **Շիրազ Հովհ.** - Կենսամատենագիտություն (կազմ. Մելյան Բ.), հատ. 2, 550 էջ, 2008 թ.

133. **Չարենցյան ընթերցումներ** - գիրք 6, (հոդվ. ժող.), հրատ. պատ. Վ. Գաբրիելյանը, 224 էջ, 1998 թ.:

134. **Չարենցյան ընթերցումներ** - գիրք 7, (հոդվ. ժող.), հրատ. պատրաստեց Վ. Գաբրիելյանը:

Նվիրված է ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի հիշատակին, 242 էջ, 2002 թ.:

135. **Չուլաքյան Հ.** - Քեսապի բարբառը, 380 էջ, 2008 թ.:

136. **Պապոյան Ա.** - Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշարի և տաղաչափության, 191 էջ, 1991 թ.:

137. **Պետրոսյան Ա.** - Վահրամ Փափազյանի «Յետադարձ հայացք» հուշագրության լեզուն և ոճը, 150 էջ, 2007 թ.:

138. **Պետրոսյան Ա.** - Նիկոլ Աղբալյան, 208 էջ, 2005 թ.:

139. **Պետրոսյան Դ.** - Գրական բանավեճերը դարասկզբի հայ մամուլում, 368 էջ, 2007 թ.:

140. **Ջրբաշյան Ա.** - Հայկական կլասիցիզմի ժանրային համակարգը, 84 էջ, 2009 թ.:

141. **Սարգսյան Վ.** - Հայոց գրերի ծագումը. ներքին վերականգնում, 336 էջ, 1999 թ.:

142. **Սարոյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ**, 60 էջ, 2009 թ.:

143. **Սաքապետոյան Ռ.** - Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, 130 էջ, 2005 թ.:

144. **Սողոմոնյան Գ.** - Նոր լրագրությունը Կ. Պոլսում 19-րդ դ. 80-ական թթ., 248 էջ, 2009 թ.:

145. **Սվաճյան Հ.** - Երկեր (կազմ. Ս. Բազյան), 300 էջ, 2005 թ.:

146. **Ստեփանյան Հ. Ա.** - Հայատառ-թուրքերեն գրականությունը, 270 էջ, 2001 թ.:

147. **Վարդան Այգեկցի** - Գիրք հաստատութեան և արմատ հավատոյ (կազմ. Շահէ քահանայ Հայրապետեան), 448 էջ, 1998 թ.:

148. **Վարդանյան Խ.** - Դանիել Վարուժանի «Յեթանոս երգեր» շարքը, 254 էջ, 2005 թ.:

149. **Վարդանյան Ն.** - Հայոց իրապատում հեքիաթը, 164 էջ, 2009 թ.:

150. **Վարդանյան Ս.** - Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (մյութեր և ուսումնասիրություններ), 270 էջ, 2009 թ.:

151. **Քալանթարյան Ժ.** - Գրական հորիզոններ (ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու), 280 էջ, 2008 թ.:

152. **Քալանթարյան Ժ.** - Վահագն Դավթյան, 164 էջ, 1991 թ.:

153. **Քրիստոնեությունը և հայ գրականությունը** (հոդվ. ժող.), 230 էջ, 2001 թ.:

Նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, հրատ. պատ. Վ. Գաբրիելյանը:

154. **Փանոսյան Ս. Ե.** - Լևոն Շանթ. կյանքը և ստեղծագործությունը, 358 էջ, 1992 թ.:

155. **Փանոսյան Ս. Ե.** - Մարդկային որոնման ճանապարհին, հոդվածներ, գեղարվեստական էջեր (կազմ. Հ. Բ. Պետրոսյան, Հ. Գ. Սարգսյան, Դ. Վ. Պետրոսյան), 371 էջ, 1995 թ.:

156. **Ахумян С.** - Думы о былом, сборник, 234 стр., 2002 г.

157. **Ахумян С.** - Из прошлого, 92 стр., 2006 г.

158. **Базян С.** - Лев Толстой и Армения, 148 стр., 1999 г.

159. **Габриелян В.** - Даниел Варужан. Жизнь и поэзия., 183 стр., 1991 г.:

160. **Гужасян Э. Р.** - Журналь азиатик (аннотированная библиография арменоведческих материалов, Париж, 1822-1985 гг.), 236 стр., 2004 г.

161. **Декабрьские литературные чтения** (сборник статей) вып. 4, 112 стр., 1998 г.

162. **Декабрьские литературные чтения** (сборник статей) вып. 5, 140 стр., 2002 г.

Ժողովածուն նվիրված է ակադեմիկոս Լևոն Սկրտչյանի հիշատակին:

163. **Декабрьские литературные чтения** (сборник статей) вып. VI, 158 стр., 2002 г.

